

# ՄԱՌՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

1988-ի առաջին վեց ամիսներու ընթացքին յուզումները բարդ իրավի-  
ճակ ստեղծեցին Հայաստանի և Ղարա-  
բաղի մէջ: Միջազգային մամուլը, հեռա-  
գրալուրերը, ինչպէս նաեւ սփիւռֆա-  
յայ մամուլը լայնօրէն անդրադարձան  
ստեղծուած կացութեան:

Վերջին շրջանին կացութիւնը հան-  
արտած է արդէն, թէն միթիւնկները և  
հաւաքները կը շարունակուին առաւել  
կազմակերպուած ձեւով:

Հայաստանի ներքին գործոց նա-  
խարարութիւնը հրամանագրով մը օրէն-  
սահմաններուն մէջ հունաւորեց  
արապետութեան յետագայ գործնիւ-  
նարակը ցոյցերու, միթիւնկներու և հա-  
ւաքներու կապակցութեամբ: Այսպէս,  
թիւնկը կը պարտաւորեցնէր թոյլտը-  
թիւն ստանալ տասը օր առաջ իւ-  
րման շիւր ցոյցի և հաւաքի համար:  
Երկրորդը պարագային կազմակերպիչ-  
ները կը պարտաւորուին յայտնել ցոյցի  
պատակի մասին, գծել նրթուղին: Յու-  
արարներուն կ'արգիլուի կրել զէնք,  
կամ այնպիսի առարկաներ, որոնք  
նաեւ վնասել դիմացինին: Կազմակեր-  
պիչները կը պարտաւորուին նաեւ յայտ-  
նել իրենց անունը և հասցէն: Ներքին  
գործոց նախարարութեան յայտարարու-  
թիւնը կը ճշդէ միեւնոյն ժամանակ, թէ  
թիւնկով արտօնուած ցոյցերը իրաւունք  
ունին արգիլելու ոչ մէկ հասարակա-  
կան կազմակերպութիւն կամ պետական  
որմէ հիմնարկ:

Ըստ ստացուած հեռագրալուրերու,  
թիւնկ շարաթը մէկ անգամ, ընդհանրա-  
պէս Ուրբաթ օրերը, միթիւնկներ տեղի  
ունենան Երևանի մէջ, ուր ճառախօս-  
ներ ելոյթներ կ'ունենան մթնոլորտի  
պակասման, Ղարաբաղի և այլ հրա-  
պարակ հարցերու կապակցութեամբ:

Ղարաբաղի հարցին լուծում մը  
թէն չգտնուեցաւ, սակայն պահանջատի-  
ւութիւնը կը շարունակուի: Ղարաբաղի  
մարզային Կոմիտէի առաջին ֆարտու-  
ղար Հենրիկ Պօղոսեանը «Ղարաբաղ»  
թերթի խմբագրին հետ ունեցած նրկար  
հարցազրոյցի ժամանակ կը յայտնէ, թէ  
պահանջատիրութիւնը կը շարունակուի  
առաւել կազմակերպուած ու մշակուած  
օրագրով: